մահուն Հեղինեայ՝ Կայսրն 'ի գլուխ եհան զայն գործ եւ արար մեծաւ փառօք նաւակատիս այնր Տաճարի 'ի ձեռն մեծահանդէս Ժողովոյ Եպիսկոպոսաց, զորմէ յետոյ։ «Անճնաչափ կենարարին Քրիստոսի լայնութիւն տապանափորած վիմին գիրկ և կէս հեռի են 'ի միջի գմբեթին սրբոյ կենարար գերեզմանէն. եւ 'ի վերայ Եկեղեցւոյն, որ չինեալ է 100 կանգուն բարձրութիւն եւ 100 լայնութիւնն՝ բոլոր յայս և յայն կողմն երկոտասան սիւնք ներքոյ և 12 'ի վերոյ վերնատանն. և յայն վերնատանն գեղարդն եւ սղունգն և սկաւառակն Քրիստոսի պատեալ ոսկւով». տես անդ Մովսէս։ Այս Տաճար յետ կրելոյ զանազան փոփոխմունս յայլ և յայլ դարս մինչ 'ի վերջին հրկիզումն 1808. վերին եւ ստորին կամարքն կացեալ էին դարձեալ 'ի վերայ 12 մարմարեայ սեանց և ոմանք եւս զոյգ. այժմեան գմբէթն մեծ ամբառնայ 'ի վերայ 18 թանձր քարեայ մոյթից։

Կանգնեցաւ տաճար 'ի լեառն Զիթենեաց 'ի տեղի Համբարձման Տեառն յար և նման Տաճարին Ս. Յարութեան, ուր եւ յայտնի սքանչելիք ցուցան. զի 'ի սալայատակել զտաճարն՝ անհնարին եղև չինողաց ծածկել քարամբք զերկու ոտնաչափ տեղիս Քրիստոսի, որպէս և ոչ զմիջնայարկն գմբեթին զուղղահայեաց 'ի նոյն վայր կարացին ծածկել, որով յայտնի եղեւ ոտնատեղին եւ ճանապարհ վերելից Փրկչին մերոյ 'ի պահու Համբարձման։ Կանգուն եկաց Եկեղեցին Համբարձման մինչեւ 1127 դար, և ապա կործանեցաւ ասէ Լատին պատմիչն 'ի զինուորաց Սուլթանին Եգիպտոսի. ուր յետոյ առաքինի ձեռամբ 'ի պատիւ տեղւոյն չինեցաւ մատուռն գմբէթաւոր ութանկիւնի մարմարիոն սեամբ և խոյակօք։

Կառուցաւ և տաճար կրկին 'ի վերայ գերեզմանի սուրբ Կուսին Մարիամու 'ի ձորն Գեթսեմանի և միջավայրի աստիճանացն յարեւելս են գերեզմանք Յովակիմայ և Աննայի, եւ յարեւմուտս յանդիման նոցին գերեզման Յովսեփայ Աստուածահայր կոչեցելոյ. 'ի ներքին եկեղեցին, որ պահի ցարդ հնութեամբ իւրով, ունի 48 աստիճանաւ. դիրք եկեղեցւոյն է խաչաձեւ կամարակապ առանց գմբէթի, և յարեւելեան բաղկի է գերեզման Ս. Կուսին փոքր գմբէթիւ.